ԱՐՈՇԵՏ-ԲԵՆԱՍԻՐԵԼԱՆ

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ «ԱՅՍՕՐ ՅԱՐԵԱՒ»-Ի ԱՌԹԻՒ

Հայ հոգեւոր երաժշտութեան անհատնում գանձերին հաղորդ դառնալու եւ ներկայացնել փորձելու եւս մի կարելիութիւն ստեղծուեց, երբ 1996-ի ձմեռնամուտին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմից առաջարկ եղաւ մեր եկեղեցական խոշորագոյն տօներից իւրաքանչիւրին նուիրուած մեկական ձայներիզ պատրաստել՝ փնջուած տուեալ տօնի կանոնի կամ կանոնների ամենացայտուն շարականներից եւ երգերից: Այդ աշխատանքների իրականացման պատիւն ու բախտը վիճակուեց «Հոգեւոր Երգի երգչախմբին», որն այդ առաքելութեանը նուիրուած էր իր կազմաւորման օրից՝ 1990 թուականից:

Անշուշտ բոլորիս համար էլ պարզ էր, թէ ինչպէս Խորհրդային Հայաստանում հայ մասնագիտական (պրոֆեսիոնալ) երաժշտութեան իրական զարգացման ծիրից դուրս ու գրեթէ անտեսուած մնաց հայ երաժշտութեան հոգեւոր (եկեղեցական) ճիւղը (ի բացառեալ երկրորդ հանրապետութեան վերջին մէկ-մէկուկէս տասնամեակի մէկ ափ նուիրեալների խիզախումները):

Ձեռնարկելով նիւթերի հաւաքման նախապատրաստական աշխատանքներին, շատ յաճախ բախւում էինք այն հիմնահարցին, երբ անհրաժեշտ շարականը բազմաձայն մշակում չունէր: Այդ խնդրի լուծման իր լաւագոյն առաջարկներով մեզ օգնութեան եկաւ հայ եւ եւրոպական հոգեւոր երաժշտութեան անուանի գիտակ՝ երգահան-նուագավար Դանիէլ Երաժիշտը («Խորհուրդ Մեծ» շարականի նրա մշակումը տե՛ս «Էջմիածին» ամսագրի 1-ին համարում), որը շուրջ երկու տասնամեակ նուիրուած է յատկապէս հայ երաժշտութեան մշակման ու մատուցման շնորհակալ գործին:

«Հոգեւոր Երգի երգչախմբի» կողմից առ այսօր պատրաստուած է երեք ձայներիզ՝ նուիրուած Ս. Ծննդեան, Ս. Յարութեան եւ Ս. Վարդանանց տօներին: Ստորեւ ներկայացուողը Ներսէս Լամբրոնացու «Այսօր Յարեաւ» օրհնութեան շարականն է Ս. Զատկուայ կանոնից եւ մեր բազմաձայնեցման առաջին փորձերից մէկը:

ՄԻՀՐԱՆ ՂԱՋԷԼԵԱՆ

ԱՅՍՕՐ ՅԱՐԵԱՒ

Խօսք եւ երաժշտ. Ներսէս Լամբրոնացու

Մշակումը Միհրան Ղազէլեանի

Հանդիսաւոր

Այ - սօր յար - եաւ ի մե - ոե - լոց փե -

Այ - սօր յար - եաւ ի մե - ոե - լոց փե -

Այ - սօր յար - եաւ ի մե - ոե - լոց փե -

Այ - սօր յար - եաւ ի մե - ոե - լոց փե -

սայն ան - մահ եւ երկ - նա - ւոր

նայն ան - մահ եւ երկ - նա - ւոր

սայն ան - մահ եւ երկ - նա - ւոր

սայն ան - մահ եւ երկ - նա - ւոր

քեզ ա - ւե - տիք խըն - դու - թեան

քեզ ա - ւե - տիք խըն - դու - թեան

քեզ ա - ւե - տիք խըն - դու - թեան

քեզ ա - ւե - տիք խըն - դու - թեան


p
հարան ի յերկ - րէ ե - կե - ղե - ցի
հարան ի յերկ - րէ ե - կե - ղե - ցի
հարան ի յերկ - րէ ե - կե - ղե - ցի
հարան ի յերկ - րէ ե - կե - ղե - ցի


f
օրհ - նեա ի ժայն ցըն - ծու - թեան
օրհ - նեա ի ժայն ցըն - ծու - թեան
օրհ - նեա ի ժայն ի ժայն ցըն - ծու - թեան
օրհ - նեա ի ժայն ցըն - ծու - թեան կԱս- տը -


կԱս - տը - ուած քո Սի - օ ն:
կԱս- տը- ուած կԱս- տը- ուած քո Սի - օ ն:
կԱս - տը- ուած կԱս- տը- ուած քո Սի - օ - ն:
ուած կԱս- տը- ուած քո Սի - օ ն:

ԱՅՍՕՐ ՅԱՐԵԱՒ

Այսօր յարեաւ ի մեռելոց
փեսայն անմահ եւ երկնաւոր,
քեզ աւետիք խրնդութեան
հարսն ի յերկրէ եկեղեցի,
օրհնեա ի ձայն ցրնծութեան
զԱստուած քո Սիօն:

Այսօր անճառ լոյսն ի լուսոյ
լուսաւորեաց զմանկունսն քո,
լուսաւորեա Երուսաղէմ,
քանզի յարեաւ լոյս քո Քրիստոս,
օրհնեա ի ձայն ցրնծութեան
զԱստուած քո Սիօն:

Այսօր խաւարն անգիտութեան
հալածեցաւ երրեակ լուսովն,
եւ քեզ ծագեաց լոյս գիտութեան
յարուցեալն ի մեռելոց Քրիստոս,
օրհնեա ի ձայն ցրնծութեան
զԱստուած քո Սիօն: